«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**27.05.2026թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Նոա ՖԱ» ՀԿ**
Առաջնություն՝	**Առաջին խմբի առաջնություն**
Խաղ՝	**«Նոա-2» - «Շիրակ-2», 21.05.2026թ.**
Վարույթ՝	**ԱԽ-232**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ԱԽ-232 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահի կողմից 2026 թվականի մայիսի 27-ին կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն և ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով (2025թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

Հասցեատեր՝
«Նոա ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ noah@noah.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27.05.2026թ.

Վարույթ՝	ԱԽ-232
Խախտում՝	«Նոա-2» թիմի ֆուտբոլիստ Զավեն Խուդավերդյանի (29014) կողմից անհասցե հայհոյանք հնչեցնելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
Առաջնություն՝	Առաջին խմբի առաջնություն
Խաղ՝	«Նոա-2» - «Շիրակ-2», 21.05.2026թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Նոա-2» թիմի ֆուտբոլիստ Զավեն Խուդավերդյանին (29014) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2026 թվականի մայիսի 21-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Նոա-2» թիմի ֆուտբոլիստ Զավեն Խուդավերդյանի (29014) նկատմամբ փորձաշրջան սահմանել 5 (հինգ) ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի

չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: